ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_11_" փետրվարի 2014թ. №_14 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի N 253-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ, <<ՏԵՂԻ N 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և 70-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն Հայկական ՍՍՌ մինիստրների սովետի 1965 թվականի նոյեմբերին Գորիսի շրջանի Տեղ գյուղի Ա. Սարգսյանի անվան N 1 միջնակարգ դպրոցը Ա. Սարգսյանի անունով կոչելու մասին>> N 429 որոշման և <<Տեղի N 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2013 թվականի հոկտեմբերի 14-ի գրավոր առաջարկության, որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին>> N 253-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 38-րդ կետում <<Տեղի N 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) կազմակերպության կանոնադրության 1. ընդհանուր դրույթներ 1-ին գլխի 1-ին և 2-րդ մասերում <<Տեղի N 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն բառերը փոխարինել <<Ա. Սարգսյանի անվան N 1 միջնակարգ

դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն բառերով, իսկ 3-րդ կետում <<գ. Տեղ>> բառերից հետո լրացնել <<Ս. Բարխուդարյան N 7>> բառերով:

2. Հաստատել <<Տեղի N 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը և լրացումը:

3. Կազմակերպության տնօրենին՝ դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժին կազմակերպության կանոնադրության մեջ կատարված փոփոխությունը և լրացումը պետական գրանցում կատարելու խնդրանքով:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2014թ. փետրվարի 11
ք. Կապան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2014թ. փետրվարի 11-ի
N-14 Ա որոշմամբ

Հակոբյան

Կազմված է 11.02.2014թ. և բաղկացած է 1 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 12.12. 2002թ.
Գրանցման թիվ-60.210.00538
Վկայական 03 Ա 055088
ՀՎՀՀ 247570009255
22.12.2010թ. գրանցված կանոնադրության
Թիվ_____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
տարածքային բաժնի կողմից
<< >> փետրվարի 2014թ.

_____ Է. Գասպարյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ << ՏԵՂԻ N 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/փոփոխություն/

1. ՀՀ Սյունիքի մարզի <<Տեղի N 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
կազմակերպության կանոնադրության 1. Ընդհանուր դրույթներ 1-ին գլխի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն ՀՀ Սյունիքի մարզի <<Ա. Սարգսյանի անվան Տեղի N 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ հանրակրթական դպրոց) շահույթ չստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

ՀՀ Սյունիքի մարզի <<Ա.Սարգսյանի անվան Տեղի N 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման հիման վրա՝ ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղի Ա. Սարգսյանի անվան N 1 միջնակարգ դպրոց պետական հիմնարկի (հաշվառման թիվ. 60.0003) վերակազմավորման ձևով, վերակազմակերպման արդյունքում՝ փոխանցման ակտի համաձայն հանդիսանում է նրա իրավահաջորդը:

Կազմակերպության լրիվ անվանումն է՝ ՀՀ Սյունիքի մարզի <<Ա. Սարգսյանի անվան Տեղի N 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հանրակրթական դպրոցի գտնվելու վայրն է 3219, ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Տեղ, Ս. Բարխուդարյան N 7:

Սույն փոփոխությունը հանդիսանում է <<Տեղի N 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության /գրանցման 22.12.2010թ./ բաղկացուցիչ մասը: